ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ՏԱԹԵՎ ԱՍՐՅԱՆԻՆ

(Հաշվետու ժամանակահատված՝ 2024 թվականի հունվարի 12-ից մինչև 2024 թվականի մայիսի 31-ը)

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ես՝ Մեթոդական աջակցության վարչության փորձագետ Մարինե Կարենի Գաբրիելյանս, հաշվետում ժամանակահատվածում կատարել եմ ստորև ներկայացված աշխատանքները.

1) **Ընդհանուր գործառույթներ**.

1. Կոռուպցիոն ռիսկերի գնահատման գործընթացի ապահովման գործառույթից ելնելով ուսումնասիրվել է հանրային և մասնավոր ոլորտներում կոռուպցիոն ռիսկերի կառավարմանը վերաբերելի միջազգային փորձը (G20/ՏՀԶԿ կորպորատիվ կառավարման սկզբունքներ, Ստանդարտների միջազգային կազմակերպության (ISO 31010) ստանդարտներ, ՏՀԶԿ-ի պետական մասնակցությամբ կազմակերպություններում հակակոռուպցիոն և բարեվարքության ուղեցույց, կոռուպցիոն ռիսկերի կառավարմանը վերաբերելի միջազգային այլ ուղեցույցներ).

2. Հանձնաժողովի 2024 թվականի կիսամյակային հաղորդման շրջանակներում Վարչության կողմից իրականացված ուսումնասիրությունների վերաբերյալ տեղեկատվության լրացման վերաբերյալ նախագծի նախապատրաստում:

2) Արտաքին ոլորտային գնահատման շրջանակներում իրականացված գործառույթներ.

1. Պետական մարմինների և այլ շահագրգիռ կողմերի հետ հաղորդակցության և նամակագրության ապահովման նպատակով՝ գրությունների նախագծերի նախապատրաստում.

2. Ոլորտային փաստաթղթերի ուսումնասիրություն, անհրաժեշտության դեպքում՝ համապատասխան վերլուծությունների իրականացում:

3) Պետական մասնակցությամբ կազմակերպություններում կոռուպցիոն ռիսկերի գնահատման ոլորտում իրականացված գործառույթներ.

1. 2023 թվականի նոյեմբերի 23-ին «Բարեվարքության խթանում և կոռուպցիայի կանխարգելում Հայաստանի պետական ոլորտում» ԵՄ թվինինգ ծարգրի (այսուհետ՝ Ծրագիր) շրջանակում «Պետական մասնակցությամբ կազմակերպություններում կոռուպցիոն ռիսկերի կառավարում» թեմայով Հանձնաժողովի կողմից կազմակերպված վերապատրաստմանը մասնակցություն.

2. Ծրագրի շրջանակներում ԵՄ փորձագետների հետ հանդիպումներին մասնակցություն, ՀՀ-ում պետական մասնակցությամբ կազմակերպությունների կազմակերպաիրավական առանձնահատկությունների, ոլորտը կարգավորող օրենսդրության ուսումնասիրություն.

3. Կոռուպցիոն ռիսկերի արտաքին պիլոտային գնահատմանը, մասնավորապես՝ հաշմանդամության գնահատման համակարգում կոռուպցիոն ռիսկերի գնահատման հարցաշարի մշակման գործընթացին մասնակցություն:

4) Մասնագիտական կարողությունների զարգացում.

1. ԱՄՆ ՄԶԳ «Բարեվարքություն Հայաստան» ծրագրի շրջանակներում հետազոտական-վերլուծական կարողությունների զարգացման 7-օրյա դասընթացին մասնակցություն.

2. Թրանսպարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի կողմից կազմակերված Հակակոռուպցիոն 9-րդ դպրոցին մասնակցություն:

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱԳԵՏ՝ **ՄԱՐԻՆԵ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ**

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԵԹՈԴԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

(Հաշվետու ժամանակահատված՝ 12.01.2024թ.-31.05.2024թ.)

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մեթոդական աջակցության վարչության փորձագետ Մարինե Գաբրիելյան կողմից 2024 թվականի հունվարի 12-ից մինչև մայիսի 31-ն իրականացրած աշխատանքները՝ ըստ ամփոփիչ փուլի արդյունքների գնահատվում է.

1. Բավարար
2. Լավ
3. Գերազանց

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի
մեթոդական աջակցության վարչության պետ՝
Տաթև Ասրյան

(ստորագրություն)

31.05.2024թ.